ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 Ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ. . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻՉՄԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 7. ՆՈՅԵՄԲԵՐ. Nr 7. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՀԵՌԱԳԻՐԸ

*Երդվում եմ Հնդկաստանի կուսական անտառներում բնակվող փիղերի վայելչակազմութեամբ եւ առիւծների թագաւորական վայրենութեամբ, ոյն այնքան նմանում է սուլթանական քաղաքականութեան. երդվում եմ նոյնպէս աղօտ լուսնի եղջիւրով, որ սուլթանի նշանը լինելով հանդերձ՝ այնքա՞ն նմանում է իր ձեւով նոյն սուլթանական սրին, որով նա խողխողում է անթիւ հայեր. երդվում եմ, երդվո՞ւմ եմ, որ այս վայրկեանին սուլթանի ուղեղը մի բեղմնաւոր երկունքի մէջ է: Անգլիական Պարլամէնտի մի մութ անդամ, որը միակ այն բարձր նշանաւորութիւնն ունի, որ բոլոտած խալիֆայի մօտ ծառայ է գրվել, անցեալ ամիս գնացել էր նրա տեսութեան, առաջին անդամ իր կեանքում: Սուլթանը հիացած էր նրանից: Նրա հետ տեսակցելիս՝ մեր արիւնախում թշնամին, ներկայ ժամանակներիս այդ զզուելի հերոսը, հանդիսաւոր կերպով յայտնել է մշուշապատ Ալբիոնի այն անարժան որդուն, թէ „հրաման է տվել իր բոլոր վալիներին՝ անմիջապէս բաշխված բարենորոգումները գործադրել“ և, ինչ գլխաւորն է, դրա մասին „իսկոյն և եթ հեռագրեն“ իրան՝ սուլթանին: „Հեռագրե՞ն“ — „իսկո՞յն և եթ“... Սատանա՞ն ինձ տանէ, եթէ դրանից յետոյ էլ շարունակեմ զրպարտիչ լինել այն իդիոտի դէմ, որի ոտքի տակ խեղդվում է հայ ժողովուրդը: Յիրաւի. վերջ ի վերջոյ պէտք է Հրատի բնակիչներ եղած լինենք չիմանալու համար, որ սուլթանն ու իր վալիները բարի են, բարի ... կատաղած վագրերի պէս... Եւ այդ թիւրիմացութիւնը վիժվածքն իր վալիներից արդէն ստացել է „իսկոյն և եթ հեռագիր“ թէ „բարենորոգումները գործադրված են արդէն“... Զարմանալի մեռելութիւնը, որ պատած է այս բոպէիս ամբողջ ամայացած Հայաստանին, արդեօք ամենապանծալի ու անձեռնադործ արձանը չէ՞ „բարենորոգումների գործադրված լինելուն“:

Արդարև, ամենաանհաւատալի աղբիւրներից տեղեկանում ենք, որ դա իրողութիւն է: Ահա սուլթան-գերեզմանափորի ստացած հեռագիրն իր վալիներից. —

„Ամեն բան կանոնաւոր ու կարգին. ամեն բան բարենորոգված է արդէն, որովհետև արդէն ոչինչ չը կայ բարենորոգելիք... որովհետև այն, ինչ որ պէտք է բարենորոգվէր, այսօր ամայացած է շնորհումն մեծն փաշիշահի, և մնում է միայն, որ Արաբիայի անապատների վայրագ բեդուինների առաջ բանանք աւելի լայն ասպարէզ, որպէս զի անապատ դարձած Հայաստանի աւերակներն ու աւազներն էլ կոխեն իրանց սքանչելի նժոյգների թեթև պայտերով: Ամեն բան կարգին, ամեն տեղ խաղաղութիւն է տիրում“ — վերջացնում է հեռագիրը:

Թող սուլթանը մեծ Մարդասպան լինելուց զատ՝ զուրկ չը մնայ կախվելու, կամ ինքնասպան լինելու և կամ խելագարվելու փառքից էս, եթէ ճիշդ չեմ ասում, որ այն վալիական հեռագիրը կարդալիս՝ այդ հրէշի դաժան դէմքը պայծառացաւ և յաղթական կերպով նա այն հաղորդեց եւրոպական տէրութիւնների բոլոր ներկայացուցիչներին: Արանք մեղրի պէս քաղցրացան և մոմի պէս հալեցան յիրաւի նմանը չեղած վեհապետի այդ „վեհանձն ու խելացի նախաձեռնութեան ու քաղաքականութեան „աֆրիկեան տաքութիւնից:

Այդ առիթով դեսպանների ժողովն անմիջապէս գումարվեցաւ և վճռեց, հանդիսաւոր մի ոճով, հետևեալը. — „Ի նկատի առնելով վեհ. սուլթանի հաղորդած հեռագիրն, այլ էս տեղի չը կայ գործադրելու ժողովիս այն որոշումը, որով սուլթանից պէտք է ստիպողաբար պահանջէինք բարենորոգումների գործադրութիւնը:“

A la bonne heure! աւելի լաւ է թքածը լզել, երբ չէք կարող կրկին թքել: Բայց աւելի լաւ էր երբէք չը թքել, երբ ձեր թքածը լզելու յատկութիւնն ունէիք: Գոնէ այն ժամանակ մենք էլ կիմանայինք, թէ այդ մեծ տէրութիւններ ասված էակը մի տխուր խեղկատակ է, մի խոժոր ֆառսեօր, մէկ անժպիտ ծաղրածու՝ հայ ժողովրդի անլուր տանջանքների նկատմամբ: Դա թերևս ձեր խաղն ձեռնտու չը լինէր, բայց գէթ մեր չերազեան դիւանագէտների աչքակապութիւններն էլ հայ ժողովրդի աչքին շատ աւելի առաջ քան այսօր մերկացած կը լինէին իրանց ամբողջ ծաղրական իմաստակութեամբ և դառն վնասակարութեամբ...

Դեսպանների այդ վեհանձն „որոշման“ առիթով հարեմի կայսրը բարեհաճեց Ցբրանսիական Հանրապետութեան ներքին գործերի մինիստրի թանկագին կողակցին, Տիկին Բարտու, շնորհել Շէֆքաթի ժապաւէնը. իսկ Ցբրանսիայի դաշնակից Ռուսաստանի դեսպան Լելիդովը թոյլատրութիւն խնդրեց որտեղից որ հարկ է՝ մի շաբաթ, ամեն օր շարունակ յաճախել Այա-Սոֆիայի մզկիթն՝ աղօթելու իր բարեկամ սուլթանի արևշատութեան համար, որպէս և նրա համար, որ այդ մզկիթը շուտով դառնայ ռուսական մայր եկեղեցի Կիւզանդիոնում...

Թող խոշոր դեւանագէտ Ձերազն ուրախանայ....

„ԱՊՑԱԿԻ“ ներկայ համարը բաղկացած է վեց էջից:

?

ՈՎ Է ԱՅՆ.

Միատեսակ երկանուն,
Երկերես է բազմազոյն.
Երկաբնեստ է ի ներքուստ,
Դրսաբուեստ է արտաքուստ.
Երկլեզու են իր խօսքեր,
Երկկերպի են իր գործքեր:
Երկու սրտով է հարուստ.
Մէկը կուտայ միշտ փախուստ՝
Որ կը ծախէ ազգիս տուն,
Ազգասէր է միւսին զոյն:
Երկգրպան է իր քրսակ.
Մին խոշոր քան իր հասակ,
Միւսը դատարկ կը ցուցնէ,
Ազգէն ըստակ կը փոցնէ,
Երբոր փարան շուտ վատնէ՝
Հոգին դեւին կը մատնէ:
Աչքին մէկը կը խնդայ,
Միւսը ծեւով մը կուլայ.
Ականջին մէկն ինչ լսէ
Միւս ականջէն բաց կրսէ:
Զարմանալի՞ն է սակայն
Ա՛յն՝ որ հրէշն այդ միայն
Երկոտանի՞ է եղեր...
Ո հ, ի՞նչ մարդիկ, ի՞նչ ցեղեր...

ԽԵՆԹԸ.

ԱԼՖԱՐԻԱԿԱՆ ԽՄԲԱԿ
ԵՒ
Մ. ՁԵՐԱԶ.

Իմ յարգելի բարեկամ պ. Մինաս Ձերազ, մի քանի օրեր առաջ տեղի ունեցած մեր տեսակցութիւններու միջոցին, այն կարծիքը ցոյց կուտար եւ այնպիսի որոշ ակնարկութիւններ կընէր, որոնցմէ կատարեալապէս հասկանալի էր թէ ինք ոեւէ բարոյական հաւատք չէր զգար Ա. Արփիարեանի եւ սուտ արբանեակներու վերաբերմամբ:

Պ. Ձերազ հաւաստիաբար կը խօսէր Արփիարեանի եւ իւր զլխաւոր արբանեակներու „թիւրք ոստիկանութեան գործակատարներ“ լինելու մասին: Նա յարեց թէ Կ. Պոլսոյ մէջ այդ Ալֆարիական խմբակի մի քանի անդամները, ինչպէս օր. Ար, Օհ, որ կը ներկայանային եւ իբր յանուն հնչակեան Կուսակցութեան կը գործէին, ներքնապէս Նազըմ փաշայի գործակատարներն եղած լինելու էին: Նա այն զօրաւոր պատճառը կը բերէր թէ, չընա-

Հայաստան
Հայ

1

2

3

4

5

„ԱՊՑԱԿ"-Ի ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

ՐԷՊՈՒՍ ԹԻՒ 8



յելով որ յոյն եւ եւրոպացի հասարակութիւններն անգամ գիտէին որ ա՛յդ մարդիկն էին Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցող կարգ մը դէպքերու եւ բռնութեամբ դրամ հաւաքելու տեղինակները եւ հրապարակաւ ալ մատնացոյց կը լինէին, այնու ամենայնիւ չէին ծերբակալուեր քանի որ իրենց թեւ ու թիկունք ունէին Նազըմ փաշան: Պ. Զերազ միանգամայն հաղորդեց թէ նոցա ծեռքով բռնի կերպիւ եւ ոճրագործութեամբ հաւաքւած մեծագումար դրամէն 5000 ոսկի բաժին ընկած է եղեր Նազըմ փաշային:

Ապա դառնալով Արփիարեանի հեռաւոր անցեալին ի մէջ այլոց ըսաւ. „Արփիարը Միացեալ ընկերութենէն քառասուն ոսկի զողնալով երբ իրողութիւնը մէջտեղ ելաւ, հարցուցինք իրեն.

—Ինչո՞ւ զողցար:

—Գանձապետէն վրէժս լուծելու համար, պատասխանեց մեզ Արփիար...:

Արդարացման համար այս այնպիսի հրաշալի գիւտ մ՚էր, որուն բով կընամ ըսել թէ կը նսեմանայ Սըվազլեի կեղծ հնչակի registred-ի խարդախ հնարքը...

Սակայն ասկէց աւելի զուարճալին կայ. մի երկու ամիս առաջ երբ պ. Զերազ վերոգրեալ իրողութիւնը Փարիզի մէջ կը պատմէ Արփիարեանի բարեկամներուն, սոքա կառարկեն ըսելով. „միթէ ատանկ հնչին զումարի մը համար արժէ՞ անպատուել Արփիարեանի նման մարդը," ... որ այդ զողցածն ալ չվճարեց:

Իսկ արդարացուցման այս ստոր ու անբարոյական պատճառաբանութիւնը այնքա՞ն զմայլելի է, որ ալ ըսելիք չունի:

Արդ, պ. Զերազ երբ այսօրինակ համոզումն ունի Արփիարեանի եւ սոքա հլու ու ստորադաս ալՓարիական խմբակի անդամներու վրայ, ապա ուրեմն չէ կարող իբր բարոյականի տէր անձինք համարել զանոնք:

Սակայն եկ տես որ l'arménie ի ընթերցողները ամենայն իրաւամբ կարող են առարկել ինձ, թէ ընդհակառակն պ. Զերազ բարոյական բարձր հաւատք ունի այդ խումբի վրայ որ իւր ընթերցողներուն կը յանձնարարէ կարդալ կատարելագործեալ այդ Անգլուխ թերթը, որ գաղտագողի հրատարակուեցաւ „Ընշանաւոր" հնչակեաններու կողմանէ... Ոչ այլ ինչ կընայ նշանակել պ. Զերազի սոյն յայտարարութիւնն ու յանձնարարականը եթէ ոչ քողարկեալ հեգնութիւն մը եւ լուրջ սրաբանութիւն մը: Այո՛, անշուշտ նա կը ծաղրաբանէ ալՓարիական խմբակը. որովհետեւ եթէ հարկադրուիմ՚ ընդունելու թէ սխալ է այս հայեացքս, այն ժամանակ պիտի պարտաւորուիմ՚ խոստովանիլ որ պ. Զերազ իւր քաջ ճանչցած յանցաւորներու յանցանքը կուզէ քողարկել... Սակայն ամեն պարագայի մէջ հաւատի եմ՚ որ կը հեգնէ, քանի որ, բացի այն, պ. Զերազ արդէն l'arménie ի նախընթաց թիւին մէջ bande, այսինքն „չարագործներու խմբակ" անունով մկրտած է ԱլՓարիական-Փրանքական խմբակը:

Պ. ՏՕՆ.

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

ՊԱՏԿԵՐ 1

Արփիարեան. — (Մեկուսի): Վերջապէս կը մերձենայ փառաւորման ժամը երբ այլ ևս կարգ մը խելակորոյս յեղափոխականներու շնորհիւ հնչակեան կուսակցութեան արժանաւորագոյն Պետը պիտի դառնամ: Իրաւ որ նախանձելի՜ յաջողութիւն: Արդի հայ երիտասարդութիւնը կուռքի պէս պիտի երկրպագէ իմ առջև ու ապագայի հայութիւնն ալ իմ նուիրականացեալ յիշատակաւս պիտի երդնու...

Իսկապէս շատ արժանի եմ սոյն օրինակ պատուոյ մը. քանզի ես ինքս իմ վրայ կը հիանամ երբ աչքիս առջև կը բերեմ յեղափոխական կամ աւելի շիտակն ըսելով՝ յեղափոխական գործունէութեանս պատմութիւնը: Զուտ շահասիրութիւնը զիս մղեց այս ասպարէզին մէջ և պէտք է խոստովանիլ որ ցարդ այնքան ճարպիկութեամբ կը խաղամ դերս որ մեծագոյն մրցանակի արժանացայ թուրք ոստիկանութեան կողմէն: 1890 ին արդէն ոստիկանութեան նախարար Նազըմի և Հիւսնիի ուշադրութիւնը հրաւիրեցի վրաս. այն ժամանակ ծամածուռ միջոցներով յաջողեցայ Մեծ-Եպարքոսին հրամանաւ կովկաս գնալ՝ իբր լրտես Խորէն Նարպէյի որ կովկաս կը գտնուէր. մեանգամայն Կ. Պոլսոյ յեղափոխական քոմիթէին ալ խաբելով անոր կողմէ գացի բանակցելու Թիֆլիս. որով երկու կողմէն ալ բաւական փարա փրցուցի... Թէև շատ բարեկամներս այն համոզումը ունէին վրաս թէ՝ տէրվիշ մարդ մըն եմ և շահամոլ չեմ. սակայն, ես զիս կը ճանչնամ՚ եա՛... Հոս չեմ ուզեր հաշիւ տալ թէ այդ երկու հակոտնեայ պաշտօններուս մէջ որքան բարեխիղճ գտնուեցայ. միայն ասքանը արժան կը դատեմ՚ յիշել որ 3,000 ռուբլի փրցուցի Կովկասէն Կ. Պոլսոյ քոմիթէի համար, այլ յակամայս գրպանիս մէջ գտան իրենց յաւիտենական գերեզմանը: Այնուհետև ձերբակալելով ազատեցայ ու հոգոյս նման աղտոտ „մեղայագիր" մը հրատարակեցի „Արևելքի" մէջ: „Արևելքի" վարչութիւնը ընդդիմացաւ հրատարակելու, այլ իմ կտրուկ սպառնալիքին վրայ կակուղցան. թէև վերջէն իսպառ հեռացուցին զիս խմբագրատուներէն. ես ալ գացի Նազըմի գիրկն ինկայ և առաջին անգամն իսկ 100 մէճիտիէ պարգև առած՝ կառքով վերադարձայ: Իմ առաջարկիս վրայ՝ Նազըմ և Հիւսնի աշխատեցան որ կառավարութեան կողմէ տարեկան 600 ոսկի նպաստով հայ թերթ մը հրատարակէի. այլ չիրականացաւ՝ նախարարաց խորհրդի մերժման պատճառաւ: Այնուհետև "Հայրենիքին" ձեռնարկեցինք: Անունը պատուական դիմակ մըն էր ներքին նպատակս քողարկելու: Եւ արդարև կեղծապարիշտ դիւանագիտութեամբ յաջողեցայ այդ վարձկան "Հայրենիքը" հայութեան ներկայացնել իբր ազգասիրական մտքի նուիրական խորան մը. մինչև որ այն թշուառական կիրճեանը դիմակս վար առաւ*

ԹԻՒ 7 ՐԷՊՈՒՍԻ ԼՈՒԾՈՒՄԸ.

Ղա-խո-րդ-ափ-տակ-ի-հուր-իա-պնակ-գը-լուխը-Ամերիկա--քած-երէ-կը-Սէն-Հնչակ-եա-նու-թի-ւն-ը սպանէ լու-գի-տմ-ամպ-ի-ռէն-ըէ-ս-Հայ-ռէնա-սէր-ներ-և-օղ-ի կոնծէ-լս-իր-օղ-ների-աչք-ը-լո-յս: —

Ղախորդ ապտակի հուրիաբնակ գլուխը Ամերիկա գացեր է կըսեն Հնչակեանութիւնը սպանելու դիտմամբ. իրեն պէս հայրենասէրներ և օղի կոնծել սիրողների աչքը լոյս:

քոմիթէին ալ խաբելով անոր կողմէ գացի բանակցելու Թիֆլիս. որով երկու կողմէն ալ բաւական փարա փրցուցի... Թէև շատ բարեկամներս այն համոզումը ունէին վրաս թէ՝ տէրվիշ մարդ մըն եմ և շահամոլ չեմ. սակայն, ես զիս կը ճանչնամ՚ եա՛... Հոս չեմ ուզեր հաշիւ տալ թէ այդ երկու հակոտնեայ պաշտօններուս մէջ որքան բարեխիղճ գտնուեցայ. միայն ասքանը արժան կը դատեմ՚ յիշել որ 3,000 ռուբլի փրցուցի Կովկասէն Կ. Պոլսոյ քոմիթէի համար, այլ յակամայս գրպանիս մէջ գտան իրենց յաւիտենական գերեզմանը: Այնուհետև ձերբակալելով ազատեցայ ու հոգոյս նման աղտոտ „մեղայագիր" մը հրատարակեցի „Արևելքի" մէջ: „Արևելքի" վարչութիւնը ընդդիմացաւ հրատարակելու, այլ իմ կտրուկ սպառնալիքին վրայ կակուղցան. թէև վերջէն իսպառ հեռացուցին զիս խմբագրատուներէն. ես ալ գացի Նազըմի գիրկն ինկայ և առաջին անգամն իսկ 100 մէճիտիէ պարգև առած՝ կառքով վերադարձայ: Իմ առաջարկիս վրայ՝ Նազըմ և Հիւսնի աշխատեցան որ կառավարութեան կողմէ տարեկան 600 ոսկի նպաստով հայ թերթ մը հրատարակէի. այլ չիրականացաւ՝ նախարարաց խորհրդի մերժման պատճառաւ: Այնուհետև "Հայրենիքին" ձեռնարկեցինք: Անունը պատուական դիմակ մըն էր ներքին նպատակս քողարկելու: Եւ արդարև կեղծապարիշտ դիւանագիտութեամբ յաջողեցայ այդ վարձկան "Հայրենիքը" հայութեան ներկայացնել իբր ազգասիրական մտքի նուիրական խորան մը. մինչև որ այն թշուառական կիրճեանը դիմակս վար առաւ*

ու դրօշակի ծայրը տնկեց որ ամբողջ աշխարհ մերկապարանոց տեսնէ ու ճանչնայ զիս։ Ալ գործս բուսած ըլլալով հոն՝ պաշտօնով տեղափոխեցայ Լօնդոն ուր, նախապէս կարգադրուած որոշման համաձայն՝ ինձ նմանող-հայ յեղափոխական արարածները պատրաստեր էի յանկարծակի սապալել տալու Նազարբէկն և Հնչակեան Կուսակցութիւնը. սակայն եկուր տես որ Հնչակը Դրօշակէն ալ աւելի ձախակելու միջոցի մը դիմեց և նոյն իսկ գծուած Ցամատեանի առաջարկութեամբն ու հայագէտի գրչովն էր որ Հնչակեան Կուսակցութենէն արտաքսման վճռագիր մը ստացայ իբր լրտես ու դաւաճան...

Սակայն ես պատկառանք չունենալուս համար չվհատեցայ երբէք, և հիմա կը տեսնամ թէ որքան իրաւունք ունիմ եղեր չվհատելուս համար. ինչու որ այսօր ահա միևնոյն Ցամատեան Ափրեն հետ ութ ստորագրողներէ երկուքը եկան մտան որոգայթիս մէջ և հիմակ ալ սողունի պէս ոտքերուս առջև են ընկած... ու կը լզեն...

Ապաքէն շուրջս բոլորուած սոյն անձնուէր ու ազգասէր յեղափոխականները ինձմէ նուազ ստորոգի եղած լինելու չեն, որ այսքան յօժարակամ ու գիտակցաբար եկան մտան որոգայթիս մէջ յուսալով մաս ունենալ այն հազարաւոր ոսկիներէն որ Հնչակի անուամբ այլ ոստիկանութեան կարգադրութեամբ հաւաքեցինք, ես ու արբանեակներս Կ. Պոլսոյ մէջ... անխելքներ, անմաօրէն մաս կը յուսան կարկանդակէն.,. ստակի սիրուն համար։

Ցամատեան. — (ընդհատելով Արփիարեանի մենախօսութիւնը) Սակայն, Արփիար էֆէնտի, թէպէտև, այնու ամենայնիւ իրաւունք չունիմ ձեր մտախոհութիւնը ընդհատելու, այլ սակայն դատի ատենը կը մերձենայ և մենք յոտնկայս ձեր հրամանին կը սպասենք...

Արփիարեան. — Արդէն գիտէք ընելիքնիդ. աւելորդ կը համարիմ կրկնել զայն։ Հայտէ, տղաքս, ձեզ տեսնամ որ դատարանէն չվերադառնաք առանց Հնչակի խափանման վճռագիրը ի ձեռին։ Հակառակ պարագային վայ եկած է ձեր գլխուն։ Լաւ գիտցիք որ այնուհետև սանթիմ մ' իսկ չպիտի տամ ձեզ։ Այս է մեր Տերոջ կամքը։ Եւ դու Օհանճանեան, կենացդ վերջին սիլինտրը դըլխարկըպիտի ըլլայ այդ...

Օհանճան. — (Արփիարեանի վրայ յարձակելով) Սիլինտրիս պատիւին մի համարձակիր դպչիլ, խայտառակ արարած, եթէ ոչ բերանդ էն. պէս կը ծեփեմ որ յաւիտեանս յաւիտենից չբացուի։ Գիտես որ խենթ եմ ու հոգս չեմ առնիլ եթէ եղնեմ ու Անգլիական բոլոր թերթերում հրատարակեմ այն ամեն կեղտոտութիւնները որ ես և ընկերներս կատարել ենք քու գործակցութեամբ ի հաշիւ Թշնամիին. ուրեմն ձայնդ կտրիր և այս փայլուն սիլինտրս այդ փիս լեզուիդ ծայրը մի առնիր։

Արփիարեան. — Իրաւ որ խենթ ես եղեր։ Ախբար, ըրածս կատակ է։ Ըշտէ՛ մեղքս քաւելու համար ահա վերուցէք սա ոսկիները ու ձեր լէտիներու թեւը մտած անանկ գացէք դատարան. անոնք ալ թող հանդիստես ըլլան ձեր փառաւոր յաղթանակին, որով ալ աւելի պիտի ողողեն զձեզ իրենց սիրոյ տաբատիներով։ Դատէն վերջը ինձի հեռագրաւ աւետեցէք...

Սըվազլի. — (խոնարհութիւն ընելով). Մեծապէս շնորհակալ եմ ձեր սոյն փափկանկատ հոգածութեան մասին. կը յուսանք ալ աւելի արժանի ըլլալ ձեր շնորհաց։

(Դուրս կ'ելնեն խոնարհաբար)

ՊԱՏԿԵՐ 2

Սըվազլեան, Ցամատեան ու Օհանճանեան ճանապարհին խօսելով կ'երթան։

Սըվազլի. — Շիտակը ըսելով շատ կը մեղքնամ այդ Նազարբէկին. բնաւ տարակոյս չկայ որ երկու տարուան բանտարկութեան դատապարտել պիտի տամ զինքը։ Սա registred ընելուս գիւտը պարզապէս հանճարեղ գիւտ մ' էր... ու դեռ կը զարմանամ թէ ինչպէս Հնչակեան Կուսակցութեան անունը, տպարանը ու ստակը չեն յանձներ մեզ ու չեն փախիր հոսկեց, գլուխնին այս մեծ վտանգէն փրկելու համար։ Սակայն, ինչ ըսէս, Աստուած նախ մարդուս խելքը կ'առնու ապա հոգին. Նազարբէկն ալ ատանկներէն է, չի տեսներ ու կարողութիւն ալ արդէն չունի տեսնելու թէ որպիսի անակնկալ ու ջախջախիչ հարուածներ պատրաստեր եմ իր դէմ... ինքնագովութիւն չը համարէք ըսածս, սակայն հաւատացէք որ Լօնդոնի դատարանական բեմը իւր պատմական գոյութեան սկզբէն մինչև ներկայ հանդիսաւոր օրն ասանկ հնարագիտ դատական խաղի մը հետ գործ ունեցած չէր...

Ցամատեան. — Մըսթըր Սըվազլի, մեր ձեռք առած լոյոլյական սկզբունքի հիման վրայ, մեր սուտ հրատարակութիւններով, մեր կեղծապարիշտ գործակցներու միմոսութեանց շնորհիւ արդէն մեր դատը շահած ենք հանրային կարծիքին առջև. ասոր բնաւ, բնաւ տարակոյս չունիմ։ Իսկ ձեր շնորհիւն ալ Անգլիական դատարանի առջև շահած կը համարիմ. այնպէս որ այժմէն իսկ կարծես կը տեսնամ բռնապետ Նազարբէկը որ, կապուած ձեռքով ու ոտքերով Ալպիոնի դաժան ոստիկանաց ուղեկցութեամբ կը տարուի դէպի բանտ... և յայնժամ Հայաստանիս արիւնաշաղախ սուրը արեամբն կ'երդնում թէ, Ազգիս ու Հայրենեացս տառապանաց համար մաշող սոյն վշտահար սիրտս անհունապէս երախտապարտ պիտի մնա ձեզ. յայնժամ միայն իմ անմխիթար մայր Հայաստանս կրնայ արժանացնել զձեզ փառաց այն անթառամ պսակին որով Հայութիւնը պարտաւոր պիտի ըլլայ պճնազարդել զքոյդ վեհ ճակատ, և յայնժամ ես, տրուպս, անցեալ ի գլուխ ազատագրեալ Հայ որերոյն՝ աղաղակեցից ընդ նոսին. „յաւերժ կեցցէ՛ փաս — թափան — ական հանճարն մեծին Սեբաստաձիւն...“

Օհանճան. — Է՛հ, է՛հ, բաւական է զառանցես. հազար անգամ քեզ ասել եմ որ էդ հոսոսական խեղկատակութիւններդ միամիտ ու անտեղեակ մարդոց առջև կատարես, այլ ոչ թէ մեր առջև, որ շատ լաւ գիտենք թէ ինչ տեսակ պտուղ ես, և թէ մեզի հետ միասին ու առանձինն, փողի ու վախի խաթէր համար, ինչպէս պատրաստ ես եղել Ազգ, Հայրենիք ու ամեն ինչ ծախել Հայի Թշնամիին... Աստուած վկայ, որ այս մեր խմբակից աւելի կատարելագործուած խաչագողների խումբ դեռ երևան եկած չէր յեղափոխութեան դիմակի ներքև։ Խե՛ղճ Բաֆֆի, եթէ ողջ մնար, պիտի տեսնէր որ մենք ազգային խաչագողութեան մասին նսեմացրել ենք իւր „Խաչագողի Ցիշատակարանի“ հերոսներին։

Սըվազլի. — Ախբար, ատանկ վիրաւորիչ խօսքեր զուրցելու վախիթը չէ։ Աւելի քան երբէք ճշմարիտ, բարեխիղճ, կարեկից և եռանդուն ազգասէր ձևանալու ատենն է հիմակ. և Ցամատեան շատ աղէկ կընէ իւր այդ դերասանական փորձերը մեր առջև՝ ալ կատարելովն, որպէս զի հրապարակի վրայ աւելի կատարելագործուած մէյտան ելլէ. ինձ հարցնես նէ մենք ալ ատանկ ընելու ենք և խորհուրդ կուտամ որ մեր Հնչակն ալ այդ ուղղութեամբ հընչեցնէ իւր ձայնը մեր հասարակութեան ականջին...

Ցամատեան. — Սակայն աղէ՛կ, հիմա ամենէ կարևոր՝ խնդիրը կայ, որ մեր կենաց ու մահու խնդիրն է։ Գիտէք թէ սա ճիզուիթ Արփիարը բոլոր ստակը ձեռքը առած երեսն անգամ ցոյց չի տար մեզ, ու այսպէս մեր քթէն բռնած կը խաղցնէ զմեզ։ Իրաւ որ մենք ամենքս ապուշ ենք եղեր, ու նորէն ան կովի գլուխ Ռշտունին մենէ աւելի ճարպիկ փրթաւ ու իր եաղլի բաժինը առած կորաւ գնաց Եգիպտոս, իսկ իւր „Թոփալ Շուանը“ տակաւին կը թափառէ Լօնդոնի փողոցներուն մէջ։

Ազասին ու Ապահը փարիզ ղրկեցինք Արփիարեանի երկու հաւատարիմներու ձեռքէն ստակները փրցնելու համար. սակայն եկուր տես որ այդ գանձապահները ելան ամենաշէք փարիզցիի նման հագուեցուցին Ազասին ու Ապահին և փայլուն սիլինտրով զարդարեցին այդ քոսոտներու գլուխը և այսպէսով կաշառեցին զանոնք։

Այս գրամն ձեռք բերելու հնարը մտածենք, Սըվազլիան էֆէնտի, զի մեզ համար ամենէ կենսական դժուարութիւնը ճիշդ հո՛դ կը կայանայ։

ՊԱՏԿԵՐ 3

Սվազլեան, Օհանճանեան և Ցամատեան։ Դատարանի առջև անպատիւ լինելէն յետոյ։

Ցամատեան. — Է՛, միսիս Սըվազլի, այս ինչ սև հոգ էր բերիք իմ գլխուն։ Հազիւ սկսած էի քաւել մեղքերս. հազիւ սկսած էի անուն մաքրել այն աղտոտութիւններէն, որոց մէջ թաթախուած էի թուրք ոստիկանութեանը հոգիս ծախելովն, և Լօնդոն գալուս վերայ հազիւ սկսած էի պատուաւոր անուան քաղցր հաճոյքը զգալ, երբ ձեզի նման պարծենկոտներն և ճարպիկները օգտուելով տխմարութենէս, մոլորեցուցիք զիս փայլուն ոսկիի խոստումներով։ Ապաքէն, այսօրուայ այս դատավարութենէն կը տեսնամ թէ այլ ևս անդարձ կերպիւ անուանարկուած ենք ու անպատուութեան անպատկառ խարանը մեր ճակտին դրոշմուած է անջնջելի խորութեամբ։ Այ՛օ, մեր փաստաբանը, մեր պաշտպան փաստաբանն իսկ իւր պաշտպանողական ճառին մէջ կ'աղաչէր որ դատարանէն անպաստ վճիռ արձակի նազարբէկի դէմ „ՔԱՆԶԻ ԱՆՈՐ ԵՒ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱԿԱՌԱԿ Է ԹԻՒՐՔ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՇԱՀԵՐՈՒՆ ՈՐ ԲԱՐԵԿԱՄ Է ԱՆԳԼԻՈՅ“։ Ուրեմն մեր թրքասիրութեան այն նոսր քողն իսկ պատռեցաւ... վաղը լրագիրները պիտի հրատարակեն. և մենք մեր դիմակի տակէն մեր սևերեսութեամբը ի ցոյց պիտի դրուինք աշխարհի առջև...

Օհանճան. — Դրուստ որ ի՞նչ խայտառակութիւն... բայց մանաւանդ ափսոս, որ մեր դրամական շողշողուն յոյսերը փչացան գնացին։ Եւ այս ամեն անբաղդութիւնների ու մեր ապագայ թշուառութեան պատճառը դուք էք, դուք, ո՜վ մեծ փասթափան Սըվազլեան։ Էն ի՞նչ մեծ մեծ փրթում էիր առաւօտեան։

Աշխարհիս ամենամեծ հանճարներից ու տաղանդներից անհամեմատ աւելի բարձրացրիր դուքեզի, մինչդեռ իսկապէս քու խելքիդ արժանաւոր տեղը բանճարների ու կաղամբների մօտն է եղել։ Քեզ եմ ասում, է՛յ, հոսոս, ինչ ես դունչ ու մռութդ էդպէս կախել թաղա հարսի նըման։ Մի ամաչիր, մի ամաչիր, արդէն արհեստդ է այս տեսակ խայտառակութիւնները։ 6-7 տարի առաջ էլ հրապարակաւ էն ձեր Հայաստան անունով լրագրի մէջ միշտ հրատարակում էիր որ եթէ Հայոց ազգը ձեզի երկու հազար ոսկի տայ Հայաստանը կարող պիտի լինէիք ազատել։ Ատա՜, չէիք ամաչում էն տեսակ սարսաղ բան էիք գրում. ափսոս որ էն ժամանակ ձեզի յիմարանոց չը դրին. գոնէ հիմա դու մեր մէջը չը գտնուելով գուցէ գործերը էսպէս խախք խայտառակ կերպարանք չառնէին։ Վեր կաց, պալա՜ս, վեր կաց, եալլա՜, վեր կաց գնանք հաշիւ տուր Արփիարին. նա մինակ քու հախիցը պիտի կարողանայ գալ... (Ցամատին գառնալով). Ատա, Ցամատ, էս մեր թափանը Ղրիմի կնկայ նման աղի արձան է կտրել. ձէն ձուն չը կայ։ Ուստի դու ոտներիցը բռնէ, էս էլ գլխիցը բռնեմ ու էնպէս տանենք Արփիարի մօտ։ Ճանապարհին եթէ զարմացող ու հարցնողլիսի կասենք թէ բժշկին ենք տանում։

(Սըվազլիի ոտքերէն և գլուխէն բռնած քաշքշելով կը տանեն Արփիարեանի բնակարանը)

Ցամատեան (ճանապարհին փողոցի մէջ) Օհանջան. կը յիշե՞ս registred ի այն երջանկայիշատակ գիշերը. Արդի այս անտէր Սըվազլին այն գիշերը աստուածացուցինք իւր registred ի սքանչելի գիւտին համար, թէև քիչ էր մնացեր մեր այն գոմշի գլուխ Ալֆարին կորսնցնէինք առյաւետ. թշուառականը գարեջուրով այնքան լցրեց իւր փորը որ խեղճ թռքերի համար շնչելու տեղ չէր մնացած և եթէ ջրհան մէքենայով գարեջուրի մի մասը այդ Ալֆարիի փորէն դուրս չհանէինք, այն գիշերն իսկ ի գոգն Սատանայի գացած պիտի ըլլար։ Ինձի եթէ հարցնես ճիշդ կարգն է հիմա այս Սվազլին այնպէս ծեփենք այս քարերուն, որ

շէնք շնորք registred լինի սալայատակին վրայ...

ՊԱՏԿԵՐ 4

Նոյնք և Արփիարեանի Ոտքը.

Սվազլի. — Տղաք։. փախէք..

Օհանջան. — Ամման... սիլի տրս... սիլինտրս...

Տամատեան. — Օգնութիւն.. հասէ՛ք ... մեռայ։

Արփիարեան. — մեռի՛ք, սատկեցէ՛ք, թըշուառական ապուշներ... (դուռը եաւէն կողպելէն յետոյ կատաղած, խելակորոյս և բերանը փրփրալիր՝ կսկսի երթեւեկել.) Անզգամներ, բաւական չէ որ բոլոր ոսկեզօծ երազներս ի դերև հանեցին ու խորտակեցին շահամոլական և, միանգամայն, փառասիրական ակնկալութիւններս, դեռ ելած փարաներն ալ կուզեն իրենց ձեռքը անցնել։ Մեղք, հազար մեղք՝ երեք հարիւր ոսկի ծախսեցի Նազարբէկի „Հնչակը“ ոչնչացնելու նըպատակաւ, մինչդեռ մեր այս ձեռնարկով ընդհակառակն առիթ տուինք Նազարբէկի և իւր կուսակցութեան բարոյական ճշմարիտ արժանիքը փայլեցնելու աշխարհի առջև։ Եւ արդարև մեր այս դատէն ի վեր անգլիական մամուլը ու հասարակութիւնը աւելի քան երբէք սկսած են մի առանձին բարձր համարումն զգալ Նազարբէկի և Հնչակեան կուսակցութեան վրայ։ Հիմա ինձ ուրիշ ճար չի մնար եթէ ոչ վերջին Դրօշակեաններու քովը երթալ, թէև մի երկու ամիս առաջ վռնտեցին զիս, սակայն հոգ չէ. արդէն մեռած չկայ երեսիս ու դէմքիս կաշին այնքան հաստ է որ ամօթը ոչ ներսէս և ոչ ալ դուրսէն կարող է ներգործել վրաս... Վերջին փորձ մ'ալ ընեմ։

ՊԱՏԿԵՐ 5

Դաշնակցական և Արփիարեան.

Երկրորդ անգամ լինելով Արփիարեանը աղուէսական նենգամտութեամբ կերթայ ձեռք կարկառելու Դրօշակին։

Դաշնակցականը, մնալով զարմացած Արփիարեանի այս ծայրայեղ անպատկառութեան վրայ, կսկսի իւր անզուսպ զզուանքը արտայայտել նորա երեսին իսկ, սակայն երբ կը նըշմարէ որ կեղծ-հնչակի տխրահոչակ — վարիչը, թարթիւֆական միշտ նոյն կեղծապարիշտ ու ժպտերես սարկականութեամբը չի քաշուիր ու հեռանար այլ տակաւին կ'սպասէ ու կակնկալէ խայտառակ գնչուի պէս ձեռքը կառկառած, Դաշնակցականը նողկանքէն երեսը կը դարձնէ Արփիարեանէն... ու կը հեռանայ։

ԽԱՐԱԶԱՆ.

ՑՆՈՐՔՆԵՐ

Շատ վաղուց էի կորուցել „Arménie“-ով և նորա յայտնի խմբագիր-պրոֆէսոր Մինասս Զերազի անձնաւորութեամբ հետաքրքրուելու մըղումը։ Այն համոզումը թէ այդ մարդը մարմնացած յամառութիւն էր իւր մասին դիւանագիտական բարձր և հազուագիւտ տաղանդ ունենալու կարծիքին մէջ, այլ և այն միւս աւելի աղետալի համոզման մէջ որ ունի նա, թէ հայկական հարցի լուծումը դիւանագիտական միջոցներով միայն կարելի էր, ինձ բոլորովին անտարբեր էր դարձրել թէ՝ այդ թերթի և թէ՝ այդ անձնաւորութեան շուրջը պտտող լուրերի նկատմամբ. մի խօսքով, այդ մարդը ընդունում էի ես որպէս մեռած և վերջացած հայկական դատի համար. ուստի մեծ եղաւ զարմացումս երբ իմացայ թէ մի տեսակցութեան մէջ, որ ունեցած է ինքնատիտղոս և ինքնակոչ պատգամաւորը „ճախարակ“ թերթի աշխատակցի հետ, Զերազ կորուցել է իւր հաւատքը դիւանագիտութեան հրաշալի քներերի մասին։ Թէև թերահաւատ՝ սակայն խպառ կորուցած չլինելով ինձէ՛ն այն վերջին յոյսը թէ մարդոց ջըղերը որքան էլ բթանան, որքան էլ քարանան ժամանակի ունակութեանց և սովորութեանց ազդեցութեան տակ, այնու ամենայնիւ էլի մի յայտնի աստիճան ընդունակ կը լինին փոփոխութեան ենարթկուելու շնորհիւ նոր, ուժեղ և կրկնուած տպաւորութեանց,— ըստ որում մարդկային ջղերը գերազանցապէս գրգռուող օրգաններ են — վերառի „Արձագանքը“, ուր զետեղուած է այդ տեսակցութիւնը, և հաստատեցի սեփական աչքերով այն՝ ինչ լսել էի։ Իսկն ասելով՝ Զերազի „հաւատքը“ դիւանագիտութեան վերայ չէ անհետացել, այլ միայն նուազել է։ Այդպէս էլ պէտք էր որ լինէր, ի հարկէ. նախապաշարումների ճանկից ազատուիլը դիւրին բան չէ և միանգամից չլինիր. ինչու՞ որովհետև ջղերը մէկ օրից միւսը չեն կարող ազատուիլ քարացած տպաւորութիւններից, այլ՝ աստիճանաբար։

Ինքն ըստ ինքեան, ի հարկէ, ուրախալի մի նորութիւն պէտք էր համարել իրողութիւնը, ոչ այն պատճառով որ Զերազի անձնաւորութիւնն է որ անպատճառ աչքի առաջ կայ, այլ այն պարագան որ մեր մէջ դեռ, դժբաղդաբար, շատ է այն միամիտների թիւը, որոնք դեռ այն խելքին են թէ առանց կռուի, առանց ժողովրդային ինքնաբեր յաղթանակի՝ Հայ ազգը կարող է թափ տալ իրանից տաճկական բռնաւորի լուծը, ուրիշ բան չունենալով անել բայց միայն գրով, խօսքով, բողոքով։ աղերսանքի միջոցով շարժման մէջ դնելով Եւրոպական կապիտալիստների հակընդդէմ շահերը։ Եւ որովհետև այդ միամիտների ծայրը գնում յանգում է մինչև Զերազը — նոցա պետը par excellence, — թոյլատրելի էր յուսալ որ նորա դարձը դէպի ուղիղ ճանապարհը օգտակար ազդեցութիւն կունենար նաև ժողովրդի այդ մասի վրայ։ Սակայն ի զուր է ուրախանալ. այդ մարդը անուղղայ է և նորանից ոչինչ չիդուրս գայ, ինչպէս ասում են։

Բանը նրանումն է որ մէկ ուտօպիից զատուած՝ գլորուում է մի ուրիշ ուտօպիի մէջ — եթէ չէր գլորուել արդէն վաղուց։

Անգլիացի ժուռնալիստի հետ ունեցած տեսակցութեան մէջ Անգլիացի գեղանի լէդիների ֆիզիկական և բարոյական չնաշխարհիկ յատկութիւնները վեր հանելուց, նոցա մորթի մարմարեայ սպիտակութիւնը, երկնագոյն աչքերի թափանցկութիւնը և դոցա հետ միասին նոցա կանացի սրտերի քնքշութիւնը նկարագրելուց յետոյ՝ աւելացնում է սատիմէնտալ շեշտով. „Ես կը ցանկայի որ անգլիացի կանայք երկիր ու երկինք շարժէին մի այդպիսի ազգ (հայ ազգը) բնաջինջ լինելուց փրկելու համար։ Կը ցանկայի որ նրանք պատգամաւորներ առաքէին Անգլիայի և Իտալիայի թագուհիներին, Գերմանիայի և Աւստրիայի կայսրուհիներին, Ֆրանսիական հասարակապետութեան նախագահի տիկնոջը, խնդրելով նրանց շուտափոյթ գործ սկսել։ Եւ որովհետև եկեղեցին մի պետրոս ձգնաւոր յառաջ չբերաւ, ոչ էլ բանակը՝ մի Գարիբալդի, ուստի կը փափաքէի որ գեղեցիկ սեռը մի Յովհաննա դ'Արկ արտադրէր...“ Պրաս բրդեցէք ձեր այդ իշդահին, պ. Զերազ. էն վաղ էր որ էշը կաղ էր։

Գեղեցիկ, հիանալի ցանկութիւններ, խօսք չկայ. բայց ասում եմ իւրովի — այդ մարդը իսկապէս ցնորած չէ՞։ Ցնորած չէ՞ այդ մարդը երբ սնանկացած „քարասիրտ“, ինչպէս ինքն է ասում, դիւանագիտութիւնից յոյսը կարծես կտրած՝ ընկնում է ցանկութիւնների, զգացումների աշխարհը հաւատալով և հաւատացնել ուզելով թէ ինչ որ աշխարհի իշխողները անկարող են անել՝ անգլիայի գեղեցիկ լէյդիները՝ կարող։ Օ, ի հարկէ, լէյդիները շատ բան կարող են անել, գիտենք որ նոքա բաւական ոյժ ունին թագաւորների գոռոզ կամքերը խոնարհեցնելու և նրանց իրենց ոտքերի տակ քարշ բերելու. պատմութիւնը օրինակներ տալիս է, բայց թէ նոցա այդ կանացի զօրութիւնը կարող է վճռող դեր ունենալ մի ամենակնճռոտ հարցի վրայ, որպիսին հայկականն է — ահա թէ ինչումն է կայանում ծիծաղելին ու անհեթեթը...

Դուք քնեցէք հանգիստ, պ. Զերազ. ամենևին կամք չունիմ խռովելու ձեր քունն ու անոյշ երազները լէյդիների աշխարհում։ Դուք օրօրուեցէք այն քաջ յուսով որ եթէ քարասիրտ դիւանագիտութիւնը չփրկեց հայ ժողովուրդը, ապահովապէս կը փրկեն նրան անգլ. ժողովուրդի անկեղծութիւնը, նազելի լէդիների փափկասրտութիւնը որին դուք աւելի էք այժմ հաւատում՝ քան քարասիրտ դիւանագիտութեան։

Իսկ մենք, հաստատելուց յետոյ թէ ձեր վերայ կատարուած փոփոխութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ մի յիմարութիւնից միւս յիմարութիւնը ընկնելը, կասենք. հասկացէք վերջապէս, եթէ կարող էք, որ գոյութեան ամողոք կռուի մէջ ազգերի կեանքն ու մահը վճռողը՝ իրենց, ազգերի կռուի ոյժն է որ բերում են նոքա ի հանդէս նախ ծածուկ վիճակի մէջ ամեն րոպէ, անդուլ, անդադար՝ ընդդէմ իրենց մրցակիցների, որ և ապա յեղափոխական անխուսափելի րոպէներում վճռում է — ինքը միակը — նոցա կեանքը կամ մահը։ Միա՛գամ այդպէս՝ ուրեմն և գծուում է ինքնիրեն այն ուղին, ուսկից, ինչպէս ամեն անհատ, ամեն ազգ, նոյնպէս և հայ ժողովուրդը անցնելու է՝ պահպանելու համար իւր գոյութիւնը կենսքի մէջ։ Այդ ուղին ամեն անգամ ամենի համար եղել է կազմակերպուած զինեալ ապստամբութիւնը — նոյնը կը լինի և հայերիս համար։

Հ.

ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

Ոմն, որի անունը յայտ և նման է Վահան Քիւրքճեան անյայտ անուան, պտտելով այլ և այլ երկիրներ, մի նոր ժօդային ազգասէր է իրան ձևացնում։ Այդ անհատը, որ առանց կարմրելու և թաքած լինելու վտանգի՝ ամեն լսողներին, ուր որ լինի, ստորութեան դաս է տալիս՝ սուլթանի ոտքերը լզելու, այսօր դըրամ ժողովելու արշաւանքին է անձնատուր եղել ամենայն ջերմեռանդութեամբ։ Սուլթանի այդ ծառան ու ոտնալէզն իր գլխում շահաւէտ պլան է կազմել, որ իբր թէ Կիպրոսում մտադիր է որբանոց հիմնել իբր թէ տասը տասնևհինգ հայ որբ երեխաներ պահելու նըպատակով։ Այդ որբանոցի կառավարիչն ու գանձապահն ինքը կը լինի անշուշտ, իսկ իր օգնականները կը լինեն մի քանի նախկին „յեղափոխականներ,“ որոնք ոտնալէզական պրոպագանդայի շնորհով այսօր աշխարհիս ամենաօրինակելի ու ամենաանպարկեշտ դասալիքներ են դարձել։ Քիւրքճեան անուն այդ մութ անձնաւորութիւնն անշուշտ իր յոյսը դրել է հայ միամիտների քսակները պարպելու վրայ... Սակայն հարց. ո՞րն է այն տխմարը, որ սուլթանի ոտնալէզին իր դրամը հաւատայ և ո՞րն է այն ժողովուրդը, որն այն աստիճան ստորացած լինի, որ իր որբ երեխաներին պահ տայ Քիւրքճեանի նման ամենախորթ հայերին։ Այդ սուլթանական ոտնալէզները իրանց արհեստի բերումով վարժ լինելով իրանց փորերով քսվել գետնին, այսօր արդեօք միայն իրանց այդ դատարկ փորի համար չէ՞ որ խակապէս մտածում են՝ յանուն երևակայական որբանոցի... Եւ նրան դրամ տվող տխմարներն անտարակոյս իրաւունք ունեն պարծենալու այն չեղած հրաշքի համար, որ երևակայական օդային դղեակներ կառուցանելու համար... ոտնալէզին դրամ են տվել...

* * *

Մեր լաւ ծանօթ Մինաս Զերազն էլ, նախանձելով Քիւրքճեանի վաստակած դափնիներին, աննման միտք է յղացել որբանոց հիմնելու... Լօնդօնում։ Այդ առիթով նա հայերին յայտարարութիւն է տվել, թէ ազգիս մէջ եղած ինչքան որբեր կան՝ թող իմացողները նրանց անուններն անյապաղ հաղորդեն իրան՝ Զերազին։ Իբրև փորձառու ազգասէրներ, գնահատող ամեն մեծ գործ, մենք շտապեցի՛նք կազմել ուղտի պոչի պէս երկար մի ցուցակ, բաղկացած մօտ հարիւր հազար որբերի անուններից, և ուղարկեցինք պրոֆսոր Զերազին... Այդ անունները նա պէտք է զետեղէ իր որբանոցում, որը որբերի միայն անունների որբանոց է եղել...

Մաղթում ենք աջողութիւն այդ անմեղ պարապմունքին, որ Զերազի համար մեծ զբաղմունքին լինելով, նրանով իր ժամանակն էլ թեթև կանցնէ, „կը սպանէ“։ Դա ամենամեծ

գործն է հանդիսանում իր ամբողջ կեանքում Զերազի համար... Նաև գեղագրութեան ամենախիզախական վարժապետի համար... Ի՞նչպէս ... Ամենապարզ կերպով: Անունների որբանոցն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ տետրակներ, որոնց մէջ Զերազը պէտք է արձանագրէ որբերի անունները...

Հէնց այդ բանի համար, այսինքն տետրակներ գնելու համար, լսել ենք, որ Զերազը պէտք է նոր դիմում անի հայ հասարակութեան, ազգասիրաբար խնդրելով նրանից „ազգասիրական լումայ“: Բայց հասկանալի է, անտարակոյս, որ „ազգասիրական լումայ“ խօսքը չը պիտի բառական մտքով ըմբռնել: Դա միայն նոյնպէս ազգասիրական բարձր ոճ է, որն այլ ոճով նշանակում է՝ „ազգէն սերող խոշոր գումարներ“, որոնք կարող են աւելի դիւրութեամբ մուտք գործել յատուկ դրամարկղում, քան նետերի ծայրով արձակված գաղափարները Զերազեան գանգային արկղում:

ՄԵՐ ԼՐԱԲԵՐԻՆ ԼՈՒՐԵՐԸ.

Ռումբերի վախը դեռ միշտ կայ. Բայց ձրագոյն փէրմանով այլ ևս Կ. Պոլսոյ երեխաներուն արգիլեալ է գնդակ խաղալ:

* * *

Կ. Պոլիսն հրդեհելու լուրը հասնելով սուլթանին՝ հրամայած է որ դէպքը եղած ատեն զինքը բարձրացնեն մայրաքաղաքին ամենաբարձր մինարէն... աղատուելու յուսով:

* * *

Սուլթանի գանձարանին մնուկը սարդոստայնով ամբողջ լեցուն ըլլալով, բոլոր հայ մատնիչները, դաւաճաններն ու դասալիքները՝ փարա չը ստանալուն համար սրդողած են և դարձած են... ազգասէր-յեղափոխականներ:

* * *

Ռօզպերիի վերջերս մեր խնդրոյ առթիւ բըռնած տարօրինակ, գրեթէ անսպասելի ընթացքն այն էր, ինչ որ անգլիական ազատականները չեն ըներ, բայց կը մտածեն և ինչ որ պահպանողականները կընեն, բայց չեն մտածեր:

* * *

Այն օրէն ի վեր ինչ Կ. Պոլսոյ մէջ ռումբ պայթեցաւ, սուլթանը կորսնցուցեր է իր բանաստեղծական ամենամեծ հաճոյքներէն մին. նայլ ևս չը կրնար առանց դողի նայիլ Բոսֆորի հրաշալի լուսնին... երբ ասիկա կլոր է:

* * *

ՆՈՐ ԼՈՒՐ

Ճշմարտութիւնը հետևեալն է. — Կեղծահնչակեանք ԱՌԱՋԻՆ եղան որ իրենց փաստաբանի միջոցաւ դատ բացին իսկական „Հնչակը“ դադրեցնել պահանջելով:

Տարածուած սուտը. — Միևնոյն կեղծահնչակեանք հիմա կը տարածեն այն սուտը որ իբր թէ դատ բացողը Նազարբէկն է եղեր:

Ընդհակացութիւն. — Սիրելի ընթերցող, բնաւ մի զարմանար որ Ալֆարի — Ֆրանկ — Շիլին — Տօլար — Ղուրուշ — Քէօփէք (կոպէկ)-ական խմբակի այդ գծուծները այժմ ալ այս անիմաստ խարեբայութեանը կը դիմեն. որովհետև դոցա անկապտելի Տիտղոսն, արդէն մի անգամ ընդ միշտ, պարտք դրած է իրենց վրայ՝ գաղտնի ու աշկարայ խարդախութեանց Միսիոնարներ դառնալու:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀՆՉ... Մ... ՄԱՍ -ԻՆ

Սիրելի ընկերներ,

Մի անբացատրելի, զգլխիչ ուրախութեամբ ստացանք ձեր ղրկած նամակը և „բերան Հընչակը“: Ո՜հ, ի՜նչ սքանչելի, հիանալի, գնահատելի էին այն „ում„-էն և „ից„-էն զուրկ, օտարոտի, անհասկանալի, դատապարտելի բառերէն թափուր և տակտիկներէն, Մարքսիստ, Լասալիստներէն հեռի,— „բերան Հնչակի„ հովի պէս թեթև, ջրի պէս սահուն, մկան պէս փախուկ տողերը, որք թէև տնանկ մտօք, սակայն բազմութեան մը տարիներէ ի վեր (ինչպէս ըսած էիք „ձեր նամակում„) սպասած բաղձալի յաղթանակը կաւետէին խրոխտութեամբ: Օրհնութիւն և փառք և...“մեղայ, մեղայ„ Եհովային. անառակ որդոց պէս կը դառնամք ի ճշմարտութեան ուղին, անոր, կը դառնամք իրարու. և հայ պատմութեան մէջ բացուած այս հիասքանչ, խորապէս խորհրդաւոր դարպլուխ կը տօնեմք խնդագին. կը տօնեմք ազգին ազատութենէն այս շատ աւելի դժուար դարձած ազատութեան անդրանիկ յաղթանակը, որ եղաւ շնորհիւ...

Փառք Ամենակալին որ ազատուած այլ ևս „անարխիստներէն“, „սոցիալիստ-դէմոկրատական“ երազածին ցնորքներէն և այլն, և այլն, որ ազատ եմք այլ ևս միանգամէն ընդ միշտ անմիութեան ու անսէրութեան ամեն պատճառներէն... կրմնայ միայն, „ինչպէս ըսած էիք„, չարաչար խաբուած լինելնուս „մեղա՜ն„ գոչել հրապարակաւ և ներողութիւն աղերսել ուր որ անկ է և մեր խաբուած ազգակիցներէն, որ յիմար գաղափարներու ազդակործան վտանգներու առիթ եղած ենք „սխալմամբ և բռնութեան փայտի տակ„...: Զեռք տանք իրար, ամենքիս ալ, գրկենք զիրար առանց խտրութեան, գունաւոր ու անգոյն, կանաչ ու դեղին, սև ու սպիտակ, չար ու բարի, խելօք ու անխելք. և համբուրուելով համբուրուինք, երգելով երգենք սրբտաբուխ, պարելով պարենք թեթևատոտ, զի „Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ„... և այսուհետև ալ ոչ մի դժգոհութիւն, ոչ մի հակառակութիւն, ոչ մի երկպառակութիւն և ոչ ալ դաւաճան կամ մատնիչ պիտի ըլլան մեր մէջ... կնցցէ...

Ի դիմաց...

Զորս ստորագրութիւն:

Յ. Գ.—Պ. Կ. Փ. ետ կը խնդրեմք այն կնիքը և գոյքերը զորս դուք առած էիք մեզմէ և պատուական Հ.-ի Մասնաճիւղին էիք յանձնած՝ մասնաճիւղս անդամներու „օրինաւոր“ թիւ չը-կազմելուն պատճառաւ: Այժմ լինելով „բերան Հնչակ„, որ ազատութիւն կաւետէ, անշուշտ նորատեսակ շատ մը նոր և ներելի ազատ օրէնքներ եւս տնօրինուած պիտի ըլլան..:

Կաթոգին Համբոյրներ, Նոյն.

„ԱՊՏԱԿ“

„ԱՊՏԱԿ“-ի երրորդ տարւայ թիւ 6 ի Յաղթանակ Հայաստանի պատկերը առանձին ընտիր թղթի վրայի տպագրված՝ ի վաճառ է հանուած զինն է կէս ֆրանկ:

ՄԱՀԱԳՈՅԺ

Պ. Մինաս Զերազ՝ փրօփէսօր առանց աշակերտի և Հեղեալ-պատգամաւոր Բեռլինի վեհաժողովին՝ անմխիթար սրտով կը գուժէ իւր ամենապաշտելի Սանի՝

ԱՆԳԼՈՒԽ ԱԼՖԱՐԻ—ՖՐԱՆՔԻ

(ԾՆԵԱԼ ԿԵՂԾ ՀՆՉԱԿ)

Ողբալի մահը, որ տեղի ունեցաւ իւր խանդակաթ Կնքահօր, այսինքն բազմավաստակ փրօփէսօրի, կաղամբափայլ բազկացը մէջ, դեկ. 4 ին, Անգլիական դատարանի մէջ:

Ազգականք, բարեկամք և համակիրք հրաւիրեալ են ներկայ ըլլալու յուղարկաւորութեան տխրաշուք հանդէսին, որ կը կատարուի դեկտ. 15-ին ի Frithville Gardens W. թիւ 99, սեփական դղեակին մէջ:

Ողբացեալ Անգլուխի դագաղն ծոպերը, պատուոյ աստիճանաւ, պիտի բռնեն Ազնուափութ Տիարք Օհանճանեան, Սրվաղլեան, Տամատեան և Աղասի-Հասօ:

Դամբանականը պիտի արտասանէ նշանաւոր հայա—թուրք Պ.... էֆէնտի, ընտիր թուրքերէն լեզուով մը:

Մեռելոյի շարականները պիտի նուագեն Երլուզ Պէշիքի, Դոլմա Բաղչէի, Ոստիկանութեան Դրան և Բ. Դրան, յատկապէս հրաւիրեալ, շուներու երգեցիկ վոհմակները իրենց ողբագոչ ռանուճներովն:

Պ. Զերազ իբր սգաւոր, միայնակ, վեհաշուք և համակ ծածկուած... սև-սև քօղերի տակ... ծանրաքայլ ու գլխիկոր պիտ հետևի իւր վաղամեռիկ Սանի դագաղին: Իսկ Պ. Երփիսարեան, իւր վիճաբ զաւկի մահէն կրած ամենաբուռն յուզումների ազդեցութենէն անկողնոյ ծառայելով, չը պիտի կարողանայ ներկայ գտնուիլ յուղարկաւորութեան տխուր հանդէսին:

Հուսկ ապա հանգուցելոյն դագաղը, հանդիսաւորապէս, Փարիզի և Մարսէյլի վրայէն յատուկ վարձուած սգապատ ու արագասոյր շոգենաւով կը փոխադրուի Եգիպտոս և կը թաղուի Ալֆարիական մեծահամբաւ գարեջրատոր դամբարանը, իր վաղամեռ հարազատին՝ երիցս ողբացեալ լոկ եռաթիւ զաւկին՝ „Ղեղոս“-ի շիրմին կից:

***

Ծանօթ. — Ի մխիթարութիւն Եւրոպայի, Ամերիկայի և Ափրիկէի հետաքրքիր և կարեկից հասարակութեան կենսական անհրաժեշտ պարտք մը կը հեմարուի յայտ առնել թէ նորածին — վաղամեռ Մեծահռչակ Հանգուցելոյն ամեն տեսակի ու ամեն վիճակի լուսանկարները մասնաւոր հոգածութեամբ հանուած լինելով՝ սուգի շրջանը լրանալուն պէս՝ անձանձիր փրօփէսօրն Պ. Մինաս Զերազ պիտի ձեռնարկէ ընդարձակ պտոյտի մը մինչև ի ծայն աշխարհի, իրեն միակ նպատակ ունենալով մոգական լապտերով այդ ամեն լուսանկարները կենդանի տեսարանի նման ներկայացնել անհամբեր հասարակութեանը իւր 70... 80... 100... 180 րդ... քոնֆէրանսներու պահուն:

ԼՕՆԴՕՆ· „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ·